ՀՈԳԵՎՈՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝ ՆՈՐ ՍԵՐՆԴԻՆ

Արարատյան Հայրապետական թեմի յոթնամյա պատմություն ունեցող քրիստոնեական դաստիարակության դպրոցների արդեն իսկ ավանդույթ դարձած հանդիսությունն այս տարի տեղի ունեցավ սույն թվականի հունիսի 22-ին: Կիրակնօրյա դպրոցների 1997-98 ուս. տարվա 21 շրջանավարտների Առաջնորդարանի դահլիճում հանդիսավորապես հանձնվեցին ավարտական վկայագրեր:

Նրանց շնորհավորելու էին եկել կիրակնօրյա դպրոցների սաները, ծնողներ, հյուրեր:

Հանդիսության ավարտին Առաջնորդարանում, նախագահությամբ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, տեղի ունեցավ թեմի կրոն դասավանդող դպրոցների տնօրենների սեմինար խորհրդակցություն, որին հրավիրված էին հանրակրթական-կիրակնօրյա 43 դպրոցների տնօրենները: Հանդիսության սկզբում Գարեգին Սրբազանը բացման խոսքով ողջունեց հայորդիների եկեղեցանվեր գործունեությունը, իր օրհնությունն ու բարեմաղթանքները հղեց տնօրեններին՝ բախտորոշ և շրջադարձային այս ժամանակաշրջանում Հայոց եկեղեցուն և մատաղ սերնդի քրիստոնեական դաստիարակության ազգանվեր գործին աջակցելու համար: Սրտաբաց զրույցի ընթացքում տնօրենների կողմից առաջադրվեցին դպրոցներում կրոնակրթական դասընթացների կազմակերպման իրավական, ուսումնական-ծրագրային և կադրային խնդիրներ:

Հանդիպման ընթացքում դասախոսությամբ հանդես եկավ Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի տնօրեն տիար Արշավիր Գաբունյանը: Նա կարևորեց Հայ Եկեղեցու դերը ժողովրդի կյանքում և ապագա սերնդի հայեցի դաստիարակության գործում: Ցավով նշեց, որ կան դպրոցներ, որոնց տնօրենները, չգիտակցելով աղանդների վտանգավոր գործունեությունը, արգելքներ են հարուցում՝ իրենց դպրոցներում կրոնակրթական դասընթացներ արտոնելու հարցում: «Ձեզ վստահված մատաղ սերնդի դաստիարակությունը և ապագա կերտվածքը ձեզանից է կախված: Ահա այսպիսի պատասխանատվության առջև է, որ բոլորս կանգնած ենք հավասարապես»: Մտահոգություն հայտնելով փշերի, որոմների պես աճող, մեր ընտանիքների բարոյական հիմքերը խարխլող ազգակործան, խայտաբղետ խմբակցությունների անարգել գործունեության առիթով, հավաստեց, որ մեր սերունդների առողջ դաստիարակության համար պայքարողները մենք պետք է լինենք, որպեսզի մրրիկի ու փոթորկի պես հեղեղված այլադավան ու ազգադավ խմբավորումները չփորձեն ապացուցել, որ «Արարատի աշխարհը եհովայի վկաների, հոգեգալստականների, մորմոնների «բնօրրանն էր» և հիմա անկախացած հայ ժողովուրդը հանդգնել է բռնաբարել սրանց իրավունքները»:

Փակման խոսքում Գարեգին Սրբազանն օրհնեց Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի նմանատիպ ձեռնարկումները՝ ի փառս Աստծու և ի պայծառություն Հայաստանյայց Մայր Եկեղեցու:

ՀԱՄՄԻԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Արարատյան Հայրապետական թեմի
Քրիստոնեական դաստիարակության կենտրոն